ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«09» մարտի 2019 թվականի № 80-Ա

«ԱՆԻ» ԲԲԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԱՆԻ» ԲԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2019 թվականի փետրվարի 23-ի թիվ 42-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի հուլիսի 18-ի թիվ 01ԱԳ/29.4/3901-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.06.2018թ-ի դրությամբ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 1 194.9 (մեկ միլիոն հարյուր իննսուն չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների մասով՝ 2 500.0 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և պետական տուրքի մասով 487,1 հազար (չորս հարյուր ութսուն յոթ հազար հարյուր) ՀՀ դրամի չափով:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-287 պայմանագրի 3.4 կետի 3.4.1, 3.4.26 ենթակետում նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

Ընկերությունը զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հուլիսի 25-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ նախարարության կողմից չի ստացվել:

2019 թվականի փետրվարի 23-ի թիվ 42-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նախարարությունը պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ընկերությանը վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ: Սույն վարչական վարույթը երկու անգամ

երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԱՆԻ» ԲԲ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Աղինի բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2012 թվականի դեկտեմբերի 28-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/287 թույլտվությունը, լեռնահատկացման թիվ L-287 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-287 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4 «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

4/9/2019

X

VERIFIED OCSP 09-Apr-19 18:17:03 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118